

Չափւէն որ ստիպուած էր անձամբ հայ-
թայթել իր ժապաւէններուն դրամադրու-
թը՝ բոլորովին անկախ ըլլալու համար եւ
ստոր պատճառով նոյնինքն Ամերիկայի մէջ
գէշ տեսնուած. Տրէյքեր որ Վամբիր-էն
յետոյ պէտք էր տասը տարի սպասել ու-
րիշ ժապաւէն մը արտադրելու համար,
Ամերիկայի մէջ Ֆլահերթի կ'իրադրծէ
Երկիրը ժապաւէնը եւ ապա նոյնինքն կա-
ռավարութենէն կ'արգիլուի անոր ցուցա-
դրումը. այսպէս ամէն տեղ արուեստա-
գէտներ, ինչպէս Տիւրքմէն, Ռեմուար,
Լանկ, Փապսք, Քլէք, բռնադատուած
էին անարժէք, առեւտրական, յաճախ ա-
նարգ ժապաւէններ արտադրել, իրաւունք
ստանալու համար օր մը իրենց ժապաւէնը
իրագործելու: Բայց ամէնէն աւելի նշանա-
կալից օրինակը, անհրաժեշտ չարժանկարն
ըմբռնելու համար, սկանտինաւեան չար-
ժանկարն է: 1915-էն 1922 տարիներուն
Շուէտի եւ Տանիմարքայի մէջ գեղարուես-
տական չարժանկար մը կը ծաղկէր, հոն
կ'աշխատէին մեծագոյն ստեղծագործող-
ներ, ինչպէս բեմադիր Սթիւլեր, Սիոս-
թրոմ, Բրիստիանսըն, Տրէյքեր: Ասիկա
խորապէս վիշտ կը պատճառէր ամե-
րիկացի եւ գերման ճարտարագէտնե-
րուն, որոնք որոշեցին արմատախիլ ը-
նել այդ երկիւղալի մրցորդը: Մինչ
գերմանացիք «Ուֆա» ընկերութիւնը
կը հաստատէին եւ սկանտինաւեան ժապա-
ւէններուն առջեւ կը փակէին իրենց հրա-
պարակները, ամերիկացիները Հոլիվուտ
կը հրաւիրէին Սթիւլերը, Սիոսթրոմը եւ
Բրիստիանսընը, դաշնադրութիւններով ի-
րենց կը կապէին եւ կը ստիպէին դառնա-
բարտադրելու միջակ եւ ճապաղ ժապա-
ւէններ: Վախճանն էր հիւսիսային գեղ-
արուեստական չարժանկարին. սպառած
ազգային նկարադրով արտադրութիւնները,
Տրէյքեր Ֆրանսա կը փոխադրուի, եւ յետ
տասնհինգ տարիներու՝ անոր միջոց կը
տրուի արտադրելու միայն երկու ժապա-

ւէն. Ժամս տ'Արփի չարչարանքները եւ վաւրքիքը: Երկու գեղարուեստական բացառիկ արժէքով գործեր... Եւ ի՞նչպէս չողբաւ բոլոր այն միւս գեղարուեստի գործերը զորս Տրէյքեր պիտի ստեղծէր եթէ ազատ ըլար գանոնք իրագործելու: Ի՞նչպէս չարտասուել այն ժապաւէնները զորս պիտի կարենային հնարել Տիւփոն, Սթերնպերկ, Ռընուար, Գլէք՝ եթէ երկաթեայ չղթայի մը մէջ առնուած չըլլային առեւտրական եւ ճարտարարուեստական կադմակերպութեան մը մենաշնորհի եւ շահագործման բնոյթով. ի՞նչպէս չողբաւ այն հիանալի գեղարուեստական գործերը, զորս պիտի կարենար ստեղծել Փան Վիկոյ, եթէ կեանքի դառնութիւնները, ընկերութեան հակառակութիւնները, ճարտարարուեստի լուծը զայն ծաղիկ հասակի մէջ մահուան չտանէին, յետ իրագործելու միակ մեծ գլուխ գործոց մը Աթլանքը:

Շարժանկարի բովանդակ պատմութիւնը նման ցաւազին փուլերէ անցած է: Անոնք ներկայ ընկերութեան առեւտրական-քաղաքական կազմին անխուսափելի հետեւանքներն են: Կարելի է դանոնք պատճառանքներ նկատել, մեկնումի կէտեր դեղեցիկ փնտռողներու բարոյականի ի խնդիր, միտիթարուելու համար: Բայց զբոնուելով այնքան բարդ եւ կարեւոր հարցի մը առջեւ, բաւական չէ ամբաստանել այդ անբարոյականութիւնը, ան գ թ ու թ իւ նը, ճապաղութիւնը եւ այլասերումը. շատ աւելի կարեւոր է ջանալ քօղադերնել այն իրական կանոնները, որ այդպիսի կացութեան մը կ'առաջնորդեն դէթ գործնականապէս եւ ոչ կրաւորաբար հետեւելու այդ երեւոյթի ընթացքին, այլ ներդրածել անոր վրայ, ուրիշ ուղղութիւն մը տալ՝ քան իր սկզբնաւորութիւնը: Գծել վերջապէս շարժանկարի պատմութեան իրական համայնապատկերը:

3. ԱՇԽԱՏԵԱՆ

(Մ.-Ռ. Վարժաբանի հանդիսին Սան)

(Գարունահանդերձ)

ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ

(† 18 *Uppm*, 1947)

Նկարչական արուեստի ներկայ միջնադարյան տաղնապլին մէջ, երբ ձեւի ու գծերու վարդապետութիւնը անտեսուած՝ լոգոյնի տարօրէն փարումով մը նոր ու անվաւերական ստեղծագործութիւններ կոչան ասպարէզը գրաւելու, երբ դիտակի քննադատութիւնը եւ նկարչութիւնը մտահոգ կը դիտեն նոր հասանքին թաւալում հին գեղեցկութիւններու վերեւ, է. Շահինի մահը լոյսի, առաջնորդի, վարպետ անհետացումին պէս տխուր կը հնչէ:

Անոր մէջ անձնաւորուած է դասակարգութեան ճարտարութիւնը եւ արդի զգայնութիւններու բովանդակ թափը: Մեծատաղանդ խաղանդ էտիկար Շահին՝ իրապարտական պէս զուտ հայկական շրջանակին եւ հայկական փոփոխութեան մէջ ամփոփուած մը չէր, ան իր տաղանդին ճառագայթները սփռած արեւմտեան աշխարհի արուեստի կարեւոր կեդրոններու մէջ՝ տիրացած էր համաշխարհային վարկի:

Իր մահուան առթիւ, հոս անոր կենսական գրականին ընդհանուր գիծերը ամփոփեմք մեզի պարտք կը համարինք, մանաւանդ որ ան նախկին Մուրադ-Ռափայելեան մը պաշտօնը առաջ Մխիթարեանց պատուին է, ինչպէս գրական մարդին մէջ Պէշիկթաշլեան, Թերզեան, Արփիարեան, Վարուժան : Ծնած Վիեննա 1873ին՝ բայց Պոլսեցի իր ընտանեկան ծագումով, Վոսիփորի ափերուն վրայ իր մանկութիւնը անցուցած, եւ ապա Վենետիկեան ծովափին ու երկնքին տակ իր երեւակայութիւնը գունազեղած եւ հոյակերտ պաշտոնեւոր ներդրումներ չնըչնուած, Էտկար Շահին շատ կանուխէն նուիրուեցաւ նկարչական արուեստին՝ խստապահանջ է. Փառթեթթիի առաջնորդութեան տակ : Անոր մէջ կ'ապրի Վենե-

ախկին իր լոյսերով, ստուերներով, իր գոյ-
ներու խաղերով:

Վենետիկ ու Փարիզ իր ներշնչումի երկու աղբիւրները՝ յայտնապէս կը խօսին իր փորագրութիւններուն մէջ : Վենետիկի մէջ կ'արթննայ անոր տաղանդը եւ իր առօրե ծրարձակումը կ'ունենայ շնորհիւ իր իմաստուն առաջնորդին՝ որ կը ներշնչէ անոր ճշգրտութեան, նրբութեան, շնորհքի դադարները, եւ որ անսահման սիրով ու դուրգուրանքով կը կապուի իր աշակերտին հետ, հեռատեսելով անոր փայլուն ապագան : Փարիզ, ուր կ'անցնի 1895էն վերջ, կ'աւելցնէ միայն Թեֆֆիի առաւելութիւնները եւ կու տայ իր ասպարէզին վճռական հաստատութիւնը : Հոն ատեն մը, դիւթուած Ժիւլ Եալի աղագեմիայի անունէն՝ կ'աշակերտի Ժան Լորանսի եւ Պէնժամէն Գոնսթանի, սակայն փութով հոգեկան ընդլզում մը կը պաշարէ զինքը անոնց ուսուցման եղանակին եւ ըմբռնումներուն դէմ : Կը նախընտրէ հետեւիլ իր տաղանդին հարազատ թելադրութիւններուն. Ժամանակ մը կ'ապրի որոնումի շրջան մը ընդմէջ իւղանկարի եւ փորագրութեան արուեստին : Թշուառ ու ցաւալին կեանքէ առնուած պատկերներ՝ կ'ըլլան իր առաջին իւղանկարները, գեղեցիկ եւ սիրուած դործեր, զոր Գեղարուեստից Ազգ. Ընկերութիւնը եւ Ֆրանսակ. Արուեստագէտներու Միութիւնը կը դրուատէ՝ տեսնելով նորահաս հայ նկարչին մէջ բացառիկ յայտնութիւն մը :

Իւզանկարէն ժանտաջուրի անցքը դէպքի մը արդիւնք է : Ի տես բանուորի մը տախտակի վրայ փորագրելուն՝ կը խորհի փորձել նոյն աշխատութիւնը պղնձի վրայ . կը յաջողի փորձը ու այդ օրէն ան կը վճռէ

